Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 15-ի N 1933-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ՝ ՇՄԶ) առանձին տեսակների (այսուհետ՝ միջոցառում) իրականացման գործընթացի կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնության և սպասարկման հավելյալ կարիքի դեպքում, առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացվում են առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց տեսական գիտելիքների և գործնական հմտությունների զարգացման միջոցառումներ:

3. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված դեպքում միջոցառումներն իրականացվում են մասնագիտական լրացուցիչ կրթություն իրականացնող կազմակերպությունների միջոցով:

4. Մասնագիտական լրացուցիչ կրթություն իրականացնող կազմակերպությունները սույն կարգի 2-րդ կետով նախատեսված դեպքում միջոցառման անցկացումից առնվազն երեք օր առաջ կարող են ներկայացնել միջոցառման կրեդիտավորման հայտ:

5. Հայտը՝ կից փաստաթղթերով, ուսումնասիրվում, բավարարվում կամ մերժվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացվելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

6. Ներկայացված փաստաթղթերի ամբողջական չլինելու դեպքում լիազոր մարմինը հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին պատշաճ ծանուցում է հայտատուին և առաջարկում դրանք երկու աշխատանքային օրվա ընթացքում համալրել:

7. Լիազոր մարմին ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ընդունվում է միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման կամ հայտի մերժման վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի հրաման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ